

# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՄԵՆ

ԱՄՍՈՐԵԱՑ ԼՈՒՐԵՐ

● Եր. 1 յուլիս. — Վաեմ, Ռական Պէջ Մարտիկան մեկնեցաւ իրաւանան, միասին մեկնեցաւ նաև Տ. Դէռք վրդ. ձանազեան, զէպի Սօվուդ Ուռուգ:

Տ. Հայկաղուն և Տ. Առողիկ վարդապետներ մեկնեցան Յոպպէ, կրօնական պարտականութեամբ:

● Կիր. 2 յուլիս. — Ս. Յակոբրեանց Մայր Տաճարին մէջ քարոզեց Տ. Տիրան վրդ. «Աղդչար և չնացո՞ւ նշան խնդրէ, և նշան մի՛ տայցի նմա, բայց նշանն Յափանու մարդարէի» բնաբանով, բացարեց թէ քրիստոնէութեան մեծագոյն հրաշը Հաւատքի ներդութեամբ կատարած հոգեկան վիրանորոգութեան եղելութիւնն է:

● Եշ. 6 յուլիս. — Ի տօնի Թարգմանիչ Վարդապետաց Ս. Սահակայ և Ս. Մելքոնպայ, երէկ իրկուան նախատօնակէն վերջ այսօր ևս կատարուեցաւ հանդիսաւոր ժամերգութիւն հանդերձ մատուցմամբ ս. պատարգի, ժամարարն էր Ս. Թարգմանչաց Վարժարանի տեսուչ Տ. Կիւրեղ վրդ., Քարոզեց Ս. Պատրիարքը, բացարելով երկու մեծ սուրբերուն կատարած գործին արժէքը:

● Կիր. 9 յուլիս. — Դիւտ Տիոյ տօնին առթիւ ս. պատարգագր մատուցուեցաւ ի Գեթանանի, Աստուածածնի գերեզմանի տաճարին մէջ, ուր Տ. Սմբատ Սրբազն քարոզեց ըստ աւուրին պատշաճի:

Կէս օրէ վերջ Ժառանգաւորաց Վարժարանի ընդարձակ սրահին մէջ կատարուեցաւ գրական մեծ հանդէս, Սահակ-Մելքոնպայան տօնի առթիւ, ըստ սովորութեան, ի ներկայութեան ամբողջ Միաբանութեան եւ քաղաքական ազգայնոց խուռն բազմութեան. կը նախագահէր Ո. Պատրիարք Հայրը: Ժառանգաւորք երգեցին հառ ընդ մէջ: Բանախօսուց Տ. Եղիշէ արելայ. «Դաշտավարի այժմն է որ կը վարէ ազգերը» նիւթին վրայ. այս ճառը հաստարակուած է Սիրոնի այս թիւին մէջ: Սարգիս սարկաւագ կարդաց զրաբար ինքնագիր ճառ մը՝ «Ս. Սահակ և Ս. Մելքոնոց» վերնազբուգ: Արշակ սարկաւագ կարդաց ինքնագիր շարագրութիւն մը, «Զեռքը», Ներկայացնելով մարդկային աջը՝ իրեն գործիք հոգեկան արտայայտութեանց եւ անոր կատարած գերը մարդկային քաղաքակրթութեան մէջ, ուրիշ ժառանգաւոր սաներ կատարեցին արտասանութիւններ: Հանդէսը, որ բացուած էր տեսուչ Տ. Տիրան վրդ. ի կողմէ, վահուեցաւ Ս. Պատրիարք Հօր Խօսքով:

● Կիր. 16 յուլիս. — Ս. Պատարգագր մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն. քարոզեց Տ. Սիրոն վրդ. քնարան առնելով Շնորհալւոյ Հաւատովին «իմաստութիւն Հօր Յիսուս» տունը, բացարեց

թէ ի՞նչ բանի մէջ կը կայանայ մտածումի, խօսքի և գործոց մէջ ցոյց տրուելիք իմաստութիւնը:

Տ. Հայկաղուն վրդ. երէկուընէ Յոպպէ իրաւուց, այսօր, յանուն Ս. Պատրիարք Հօր Նախագահեց նոյն տեղի դպրոցական ամագերջի հանդէսին:

● ԲՀ. 17 — Եր. 22 յուլիս. — Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի տարիկերջի քննութիւնը կատարուեցան շարթուան ընթացքին: Ս. Պատրիարքը անթափան նախագահէց բոլոր բերանացիներուն, մեծագոյն մասամբ ինքն անձամբ կատարելով քննութիւնները ներբեկն էին նաև Ս. Եղիսկառոպոսները և ուսուցիչն միաբան վարդապետները: Սարկաւագաց և ժառանգաւորաց դիմաւոր դասերէն ոմանք կատարեցաւ զբանը:

Այս շարաթ տեղի ունեցան նաև Ս. Թարգմանչաց վարժարանի բնութիւնը, որոնց վարչութիւնները, որոնց նոյնական ներկայ գտնուեցան Ս. Պատրիարքը եւ միաբանութեան անդամներէն շատեր:

● Եր. 22 յուլիս. — Ի տօնի Տապանակի Հայոց Աւիտին, երեկոյին նախատօնակ եւ այսօր ժամերգութիւն և Ս. Պատարգագ կատարուեցաւ Մայր Տաճարի յարակից Ս. Էջմիածին եկեղեցւոյ մէջ:

Երեկոյին, յիշատակաւ առաջին պատարագի Տեառնեղպայը Առաքելոյն, ըստ սովորութեան՝ Դաւթի մարգարէին եւ Յակոբայ առաքելոյն ի պատիւ նախատօնակ կատարուեցաւ Մայր Տաճարին մէջ, ուր Ս. Պատրիարքը մուտք գործեց Հանդիսաւոր Հարաւագիակիւ:

● Տիրոն վրդ. Հայքա գնաց Վարդապետի տօնին առթիւ՝ պատարգագելու և քարոզելու նպատակաւ:

● Նոյն պաշտօնով Ամման մեկնեցաւ Տէր Ջղօն վրդ. ընկերակցութեամբ Տիր. Յարութիւն Սարկաւագի:

● Կիր. 23 յուլիս. — Ի տօնի Վարդավալառին, Ս. Պատրիարքը պատարագից: Յետ ս. պատարագին հանդիսաւոր հոգեհանգիստ եղաւ վասն յիշատակի Սարգիս և Տիրունի կիւլունկեանի, որոնց որդին եւ Ս. Աթոռոյ բարերարը Գալւուստ Պէյ կիւլունկեան, վիրչեր հաճած էր նոր նուէր մը զբկել իւրակիրտ կիւլունկեան Մատենադարանի կահաւորման համար: Ս. Պատրիարքը Հոգեհանդիսաւին առթիւ ծանուցում ընելով այս մոսք, Հանգուցեալներուն համար երկնային հանդիսաւ եւ իրենց դաւիկին համար բարօրութիւն կինաց մազմեց:

● ԲՀ. 26 յուլիս. — Տեղի ունեցաւ Ժառանգաւորաց մարդանանդէսը, ի ներկայաւթեան Ս. Պատրիարք Հօր և ամբողջ միաբանութեան:

● Եշ. 27 յուլիս. — Ժառանգաւորաց վարժարանի մեծ սրահին մէջ կատարուեցաւ զարոցական տարեկիրջի պարզ հանդէս մը. նախադասութեամբ Ս. Պատրիարք Հօր եւ ըրուոր միանից: Բարգէն սարկաւագ եւ Թովմաս Ժառանգաւոր երախտագիտական ուղերձներ կարդացին ի գէմա Ս. Պատրիարք Հօր: Յետոյ տեսուչ Տ. Տիրան վրդ. նոյնական չնորհակալութեան սրտազին

արտայայտութիւնները ըրաւ ն. Ամենապատռութեան և Ս. Աթոռոյ պատկանեալ ժողովոց և կարդաց զարգարանին կեանքի տարեկան տեղեկագիրը, ցոյց տալով բարոյապէս և մուսարապէս գնահատելի յառաջդիմութիւնը թէ ժառանգաւորաց եւ թէ Ընծայարանի բաժններուն մէջ կարդաց անունները նաև ամէն նիւթի մէջ առաջին հանդիսացող աշակերտաց, որոնց դրենական պարգևները բաշխեց Ս. Պատրիարք Հայութը, ինչպէս նաև ընդհանուր նիշերու վիճակացոյցը ի վերջո խօսեցաւ Ս. Պատրիարք Հայութը, հայրական խօստի խօսքիր ուղղելով աշակերտներուն և բացարձելով անոնց թէ ինչպէս պէտք է արձակութիւն զբանապէտի օրերը օդատպութեն յառաջիկայ վերամուտին հոգեկան լաւագոյն տրամադրութիւններով վերակելու համար իրենց պարտականութեանց :

❶ Կիր. 30 յուլիս. — Ս. պատարացը մատուցուեցաւ ի Ս. Յառութիւն, ուր քարոզեց Տ. Գաբրիէլին վրդ. : — Խեկ Ս. Հրեշտակապետաց հեղեղեցոյն մէջ պատարագեց Տ. Նորայր վրդ. եւ քարոզեց «Որ սիրէ զարդ կամ զմայր առաւել քան զիս, ոչ է ինձ արժանիք ընարանով, շեշտեց թէ հզմարիս քրիստոնեան պէտք չէ Աստուծմէ աւելի սիրէ ոչ մէկ անձ կամ իր։

❷ Ս. Պատրիարքը առաւտուեն Ս. Ենունդ գնաց Տ. Եղիշէ արեգայի հետ, եւ ներկայ դըմոնուեցաւ Ս. Այրին սեղանին վրայ մատուցուած ապատարացին։

Կէս օրէ վերջ, ժառանգաւորաց մեծ բակին մէջ տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց վարժարանի տարեկան հանդէսը, կը նախագահէր Սրբազն Պատրիարք Հայութը, Ներկայ էին բոլոր միաբանները, եւ խուններամ ժողովուրդը։ Տեսուչ Տ. Կիրեղ վարդապէտ արտասանեց բացման խօսքը։ Յետոյ Մանկապարտէզի ու նախակրթարանի մեծ ու փոքր երկու սեռէ սաներ անդադրում սկսութեան մէջ պահեցին բոլոր ներկանները, իրենց երգերով, արտասանութիւններով, խաղերով, պարերով, արամախօսութիւններով, փաքրիկ ներկայացութեաններով։ Վարժարանը այս տարի ունեցաւ 10 ըրջանաւարտներ, որոնց անուններն են. Օրիորդներ՝ Ազատուհի Տաքէսեան, Աղնիս Կարապետեան, Արշալոյ Մանտուեան, Մարի Թագուրեան, Մարիամ Նշաննեան, Մերի Հէօնմէլեան, Պայծառ Պապիկեան, Վարդանոյ Մարտիրոսեան, Վարդուհի Ազանանեան և Պր. Յակոբ Նշաննեան։

Հրաժեշտի հառէն վերջ, Ս. Պատրիարքը խօսեցաւ, գոհունակութիւն յայտնելով ձեռք բերուած յաջողութեանց մասին. ազգու խրատական մը ուղղեց ըրջանաւարտներուն, որոնց վկայականներուն հետ յանձնեց նաև մէջ մէկ առձեռն ժամագիրք և նարեկ։

### ՆՈՐԻ ԻՐԱԾՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

#### Կիւլպէ՛նեան Մատենադարանին Մրգոց Ցակորեանց

Ծնորհակալութեամբ կ'արձանագրենք քեզզային բարեւար Վահեմ. Պալուս Պէյ Կիւլպէնկեան նուիրած է 30,000 Ֆր. Ս. Արուույս Կիւլպէնկեան Մատենադարանի կանաւորման ծախուց նամար։

Խենց նեղինակներուն կողմէ նուիրուած նետեւեալ զիրեն ալ ընտակալութեամբ ուացուած են.

1. ԱՐԵՒ-ԱՆԶԲԻՆ, Քերմուածներ (1930-1932), Վահէ-Վահեան, Գէյրութ, 1933, էջ 92; Գին 15 Պրանք: Հասցէ, Sarkis Abdalian, High School, Brummana (Liban):

2. Ո-ՈԾՈՒԹՈՅԻ ՀԱՅԵՐԸ, 1606-1922, Սարգիս Գ. Փաշանեան, Սօֆիա, Տպարան «Զանդ», Գուլ. Տրակոման 26, 1929, էջ 128; Գին 50 սէնթ: Հասցէ, Ս. Փաշանեան, Գուլ. Տրակոման թիւ 21, Սօֆիա:

3. ԿՈՒԶԻԿԻ ԳԵՏԾՈՆ, (Հէքեաթ), Արսէն Երկաթ, Հրատ., «ԱԿԱԿ-Մեծոսպ» Տպագրատան: Գահիրէ, 1933, էջ 31:

4. A SHORT RELIGIOUS HISTORY OF ISRAEL, By E. W. Hamond, M. A., Formerly Principal of the Jerusalem Men's College. 1932, p. 158.

5. THE EIGHTH CENTURY PROPHETS, By E. W. Hamond, M. A., with a Preface by Dr. Cyril Norwood, 1932, p. 144.

6. THE IMPOSSIBLE, — The British and Foreign Bible Society, 146 Queen Victoria Street, London, E. C. 4, 1932, p. 124:

### Սիսիին

Երուսաղէմացի ազգայիններէն Ազն. Տիար Մերկեր Յ. Մերկերեան նուիրեց 10 պ. ոսկի։ Մեր մեծայարդ հայրենակցին սոյն երկրորդ նուէրը եւս կ'արձանագրենք շնորհակալութեամբ։

### Բարեպատճեան

Եւնիրն Սիրիի Հայոց Հոգեւոր Հովի Տ. Մամբէ Մ. Վ. Վ. Գ. Գոյքանի միջոցաւ սատուած են ընորհակալութեամբ, նոյն Տաղաքի մէջ բնակող նետեւեալ բարեպատճեան ազգայիններուն կողմէ տրաւ նոււիրեալ։

Տիկ. Մարիամ Թռնամեանէ 10 տար, Տիկ. Թռնամ Խաչառուեանէ 5 տ., Տիկ. Մնուս Տպաղեանէ 3 տ., Տիկ. Լուսիա Մաւրանէ 1 տ., Տիկ և Տիկ. Մելզունեան 6.5 տ., եւ Պ. Գ. Աւետիսեանէ 5 տ.։

Երուսաղէմէ Տիկ. Վերգին Պավամեան մէկ ըիրէղ ձեր նուիրած է Ս. Գլաւարի նամար։

Proprietor — His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.

Editor — Father Karekine Bulbulian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.